ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 դեկտեմբերի 2023 թվականի N 2146 - Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածը և «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի հաշվեկշռում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի Գարեգին Նժդեհի N 36 հասցեում պետական միջոցների հաշվին կառուցված բազմաբնակարան շենքի համապատասխան բնակարանները նվիրել՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Ապարան քաղաքի Մ. Բաղրամյան փողոց 43 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Ապարան քաղաքի Գ. Նժդեհի փողոց 7 հասցեներում բնակվող քաղաքացիներին՝ համաձայն NN 1, 2 հավելվածների, ինչպես նաև 1988 թվականի երկրաշարժի հետևանքով Ապարան քաղաքում բնակելի տունը քանդված (կամ քանդման ենթակա) և նախկինում բնակարան չստացած ընտանիքներին ու Արցախյան 44-օրյա պատերազմում զոհվածների

ընտանիքներին՝ համաձայն N 3 հավելվածի, համապատասխանաբար սեփականության իրավունքով և ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ հավասար բաժիններով, հողամասը՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով՝ համապատասխան բաժնեմասերով:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ ապահովել սույն որոշման հավելվածներում նշված բնակելի տարածքների նվիրատվությունը:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝

1) հավելվածներում նշված բնակիչների հետ կնքել նվիրատվության պայմանագրեր՝ դրանցում նախատեսելով, որ պայմանագրերի նոտարական վավերացման և պայմանագրերից բխող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման պետական բյուջեի միջոցների հաշվին, իսկ քաղաքացիները Հայաստանի Հանրապետության հանդեպ հետագայում սույն որոշման հիման վրա բնակելի նշանակության գույքի ձեռքբերման վերաբերյալ գույքային պահանջ չեն ներկայացնելու.

2) սահմանել դրույթ, համաձայն որի 1988 թվականի երկրաշարժի հետևանքով անօթևան ընտանիքները բնակարաններ ստանալուց հետո վեցամսյա ժամկետում պետք է կազմակերպեն իրենց կողմից բնակության նպատակով զբաղեցված ոչ հիմնական շինությունը (տնակը) և (կամ) վթարային բնակելի տունն իրենց միջոցների հաշվին քանդելուն ուղղված աշխատանքները.

3) աջակցել քաղաքացիներին սույն որոշման 8-րդ կետի իրականացման մասով՝ մինչև նվիրատվության պայմանագրերի կնքումը:

4. Սահմանել, որ քաղաքացիները Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Ապարան քաղաքի Մ. Բաղրամյան փողոց 43 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Ապարան քաղաքի Գ. Նժդեհի փողոց 7 հասցեներում իրենց սեփականության իրավունքով

պատկանող բնակարանները պարտավորվում են նվիրել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքին, ընդ որում, հավելվածներով նախատեսված նոր բնակարանների նվիրատվության և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքին քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող բնակարանների նվիրատվության պայմանագրերը կնքվում են միաժամանակ:

5. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ղեկավարին սույն որոշման NN 1, 2 հավելվածներում նշված բնակարանների սեփականատերերի հետ կնքել նվերն ընդունելու վերաբերյալ պայմանագրեր՝ դրանցում նախատեսելով՝

1) որ պայմանագրերի նոտարական վավերացման և պայմանագրերից բխող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման համայնքի միջոցների հաշվին.

2) դրույթ, համաձայն որի Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Ապարան քաղաքի Մ. Բաղրամյան փողոց 43 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Ապարան քաղաքի Գ. Նժդեհի փողոց 7 հասցեի բնակիչները պայմանագիրը կնքելուց հետո առավելագույնը 10-օրյա ժամկետում պարտավորվում են ազատել իրենց կողմից զբաղեցված տարածքները:

6. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ղեկավարին աջակցել քաղաքացիներին սույն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված աշխատանքների իրականացման մասով:

7. Առաջարկել Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ղեկավարին նվիրատվության աշխատանքների ավարտից հետո երկամյա ժամկետում իրականացնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Ապարան քաղաքի Մ. Բաղրամյան փողոց 43 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Ապարան քաղաքի Գ. Նժդեհի փողոց 7 հասցեներում գտնվող շենքերի քանդման աշխատանքները, մինչ այդ բացառելով այդ բնակարանների բնակեցումը:

8. Սահմանել, որ նվիրատվության պայմանագրերը կնքվում են սահմանափակումներով ծանրաբեռնված բնակարանների նկատմամբ սահմանափակումների վերացման որոշման կամ սահմանափակում կիրառողի համաձայնության պարագայում: Ընդ որում, սահմանափակումներով ծանրաբեռնված լինելու դեպքում բնակարանների նկատմամբ սահմանափակումների վերացման որոշումները կամ կիրառված սահմանափակման առարկայի փոխարինումը նոր փոխանցվող բնակարանի վերաբերյալ սահմանափակում կիրառողի համաձայնություններն ապահովում են քաղաքացիները:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

14.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ